

659

Ch - 45



4-17

ԱՐԹԵԼԻԿԻ

Ն Ո Ռ

ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶԸ

Հ Յ Վ

ԹԱՐԳՄ. ԱՌԻՍԵՐԵՆԻՑ Տ. Յ.

Թ Ի Ֆ Լ Ի Զ

ՀԱՅԱՍՏԱՆԻ տպարան «ՀԵՐՄԵՆ» ըսկ. Մադաֆեսան փող. № 5.  
1906 (172)



1982-58

# ՆՈՐ ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶԸ

Ոսկեշող արել, քաղցր ժպտալով, զմայլւած  
դիտում էր երկիրը վերևից: Եւ չէր կարելի չը-  
զմայլուել, — ստուերախիտ անտառները, շքեղ  
ջրաբեի մարգագետինները, զու արթ պուրակնե-  
րը, երկնագոյն գետերը՝ իրանց մարմանդ խոր-  
շերով — կատարեալ գեղեցկուհի էին դարձնում  
երկիրը: Իսկ մարգագետիններում՝ հրաշէկ ած-  
խիկների նման վառվուում էին կակաչները և կո-  
պոյտ գլխիկներով ողջոյ տալիս միմեանց զանգա-  
ծաղիկները... Գետախորշերի վճիտ ջրերում՝  
ճերմակաբուն ցարասինները, լողուոր նորահարսերի  
նման, թրջում էին իրանց դայար վարսերը... Անտա-  
ռում կանգուն հուժկու եղեինները, ասես բարի  
հականեր, պահպանում էին զովը ցերեկուայ տօ-  
թից... Պուրակի թաւուտում՝ սոխակը, թառած, մի-  
այն երեկոյեան խաղաղութեանն էր սպասում,  
որպէսզի սկսէր իր սրտառուչ դայլայլիկները...  
Եւ կայտառ ձկները, ազատ-արձակ խայտալով,

դուրս էին թռչում գետի կոհակներից ու նորից սուզում, ցոլացնելով իրանց թեփերը...

Այդ բոլորը դիտում էր պայծառ արել երկնային բարձունքից և հրճում, տեսնելով երկրի փարթամութիւնն ու գեղեցկութիւնը և երկրաշին բարիքների լիութիւնը:

Բայց օրը թեքում էր գեղի երեկոյ, և որքան աւելի էր արել խոնարհուում դեղի երկիրը՝ այնքան աւելի էր կորցնում պայծառութիւնը, —նա այժմ սկսեց նկատել այլանդակ բծեր երկրի ընդհանուր գեղեցկութեան վրայ, —բծեր, որոնք ամեննեին չէին նշմարում, քանի դեռ արել բարձր էր կանգնած երկնքում:

Այժմ նա տեսաւ գործարանների վիթխարի, այլանդակ աղիւսէ շնչերը՝ բարձր, ուղղաձիգ ծխնելոյզներով, որոնցից ժայթքող մրէ ամպը ծածկում էր երկրից երկնքի պարզ ու կապուտակ երեսը: Սև մրի լեռնակոյտերի և բոլորովին բուսազուրկ սև, մեռեալ ամայավայրերի արանքներին՝ նա տեսաւ ահազին գետնանցքեր, ասես ահազին որջեր, որտեղից անդադար բարձրանում էին քարածուխով լի դոյլեր, և մռայլ մրակոյտերը աճում էին ու աճում չորս կողմը:

Եւ որ զիսաւորն է —արել մարդիկ տեսաւ, բանուոր մարդիկ: Սև, մրոտած կամ ուղղակի կեղտոտ, ցնցոտիներ հագած, լարուած աշխատանքից

կարմրած կամ անտանելի տօթից քրտնած դէմքերով՝ նըանք վխտում էին ամեն տեղ, այլանդակելով երկրի գեղեցիկ տեսքը:

Եւ դիտելով այդ բոլորը, արել նախ մթազնեց, իսկ յետոյ սկսեց հետզհետէ, կարմրել:

Յանկարծ գործարաններում ու ածխահանքերում սկսեցին հնչել սուլիչները պէս-պէս ձայներով. որը ոռնում էր, որը շրւացնում, որն էլ ծըւծըւում, բայց բոլորն էլ անխտիր ականջ էին ծակում: Մի քանի ըոսէ անցած՝ գործարանների դարպասներից ու ածխահանքերից ըսկսեցին գուրս թափուել գործաթող բանուորների խմբեր: Գեղջուկներն էլ թողնում էին դաշտային աշխատանքները ու տուն գնում բանուորների յետից: Շուտով՝ կարկատած ու գգգզուած վերնաշապիկների, քաթանէ վարտիքների, ծակծըկուած կօշիկների ու իւղոտած գլխարկների մի ամբողջ ծով հեղեղեց բոլոր ճանապարհները... իսկ դէմքերը... օֆ, այդ դէմքերը: Յոզնած, հալումաշ, շատերը՝ բթամիտ իծնէ, բայց աւելի ևս բթամտացած՝ աշխատանքի միակերպութիւնից և խորը տղիտութիւնից, շատերն էլ՝ պայծառ ու ելօք հայեացքով, բայց տառապանքի արտայայտութեամբ, և բոլորը՝ ճորտութեան կընիքով... Կարծէք այդ դէմքերը պատկանում էին ոչ թէ ի ծնէ ազատ մարդկանց, այլ ինչ որ տիւ-

ըունի, բայց տիրոջից աչքաթող շնչաւոր ի-  
րերի:

Եւ տեսնելով այդ բոլոր աղքատութիւնը  
բնական հարստութեան մէջ,—այդ հարկագրեալ  
կեղար և տառապանքը՝ ամենքին անխտիր վա-  
յելք առաջարկող մայր—բնութեան գեղեցկու-  
թեան մէջ, տեսնելով բանական էակների ստո-  
րացումը երկրային փարթամութեան մէջ,—արել  
շառագունեց ամօթից ու զայրոյթից և շտապով  
մտաւ բարձր բլուրի յետել:

Մի ուրիշն էլ կար, բացի արեից, որ տես-  
նում ու հասկանում էր ամբողջ գառնութիւնը  
այդ տեսարանի: Մի մարդ էր այդ, մի եկուոր  
մարդ: Հնամաշ, սև պարեգօտ ունէր հազին, թա-  
սակ՝ գլխին, վտիտ պարկ՝ շալակին, իսկ մէջքին՝  
լայն կաշէ գօտի, որի մէջ սեղմուած նիհար մար-  
մինը ամբողջապէս ծածկուած էր ճանապարհի  
թանձր փոշիով: Անշուշտ ուխտաւոր էր ու սըր-  
բավալըերից էր գալիս, ուր գնացել էր թէ իր,  
թէ ուրիշների մեղքերը քաւելու: Աչքերումը շատ  
բարութիւն էր փայլում, բայց կարծես ինչ որ  
մի բան ճնշում էր այդ բարութիւնը: Կոպիտ կա-  
տակներ ու յիշոցներ էր լսում կողքովն անց-  
նողների բերնից և հոգին ցաւում էր այդ մարդ-  
կանց վրայ, որովհետեւ զգում էր, որ այդ սան-  
ձարձակ խօսքերով նրանք հովացնում են իրանց

յոգնած, կծկուած սրտերը, և եթէ հայհոյում են միմեանց, պատճառն այն է, որ չարքաշութիւնը դիւրագրգիռ է դարձրել նրանց։ Ի բոլոր սրտէ ուզում էր օգնել այդ մարդկանց և վճռեց այդ անել իրան յայտնի միակ միջոցով։

Բարձրացաւ բլուրի գագաթը և խզուած, բայց յուզմունքից դողդոջուն ձայնով դիմեց անցորդներին։

— «Եկէք ինձ մօտ բոլոր վաստակեալներդ ու բեռնաւորներդ և ես կը հանգստացնեմ ձեզ», — այսպէս է ասում Աստուած։ Կանգ առէք, ուրեմն, ամենքդ, որոնց վրայ անխոնջ աշխատանքը դրել է հիւծման կնիքը և որոնք յոյս չունէք տանն ևս սփոփանք ու հանգիստ գտնելու, որովհետև այստեղ խեղճութիւն ու աղքատութիւն է սպասում ձեզ... Կանգ առէք, որովհետև հանգստութիւն կը գտնէք Աստծու խօսքի մէջ։

Հետզհետէ մեծ ամբոխ կիտուեց պանդուխտի շուրջը։ Ամբոխը ուշագրութեամբ լսում էր և պանդուխտը խօսում։

Նա վարդապետում էր, թէ ժողովուրդը չունի ուրիշ ճանապարհ, բացի համբերութիւնից, ուրիշ զէնք՝ աշխարհիս հզօրների դէմ, բացի հեղութիւնից, փրկութեան ուրիշ միջոց, բացի՝ չարին չը հակառակելուց։

Նա ասում էր.

— Երանի հոգով աղքատներին, որովհետեւ նը-  
րանցն է երկնքի արքայութիւնը:

— Երանի սպաւորներին, որովհետեւ նրանք կը  
միսիթարուեն:

— Երանի հեղերին, որովհետեւ նրանք կը ժա-  
ռանգեն երկիրը...

Նրա խզուած, բայց բարի, հոգեթափանց  
ձայնը՝ իր անկեղծ համոզմունքի շեշտով՝ շար-  
ժում էր լսողների սիրտը ու օրօրում նրանց  
միտքը, որին օրօր էր կարդում նաև քարոզի  
բովանդակութիւնը: Ամբոխը աճում էր: Ունկն-  
դիրների շարքերում լսւում էին հառաջներ, կա-  
նացի խանդադատ շշուկներ, իսկ ուշագիր նայողը  
նոյն իսկ արցունք կը նկատէր ոմանց աչքերում:

Քարոզիչը վերջապէս կանգ առաւ: Ծունկ  
չոքելով, աչքերն ու ձեռքերը բարձրացրեց դէ-  
պի երկինք ու սկսեց աղօթել: Բայց հէնց որ  
վերջացաւ նրա աղօթքը, հէնց որ մարեց ուխ-  
տաւորի յուզուած շշուկի յետին հնչիւնը, նրա  
կողքին, դեռ ևս ոչ բոլորովին մթնած երկնքի  
երեսին՝ գծագրուեց մի նոր կերպարանք: Այդ  
մարդն էլ անծանօթ էր շրջապատող ամբոխին,  
բայց դրա շնորհիւ ևս աւելի էր գրաւում դէպի  
ինքը բազմութեան հայեացքները: Նա ամեննեին  
նման չէր կորամէջք օտարականին: Քաղաքա-  
ցու սովորական շոր էր հագին. ջլուտ մարմինը

ուղիղ էր պահւում, գլուխը՝ բարձր, իսկ հուր-  
հրատող աչքերը նայում էին ամբոխին համար-  
ձակ հայեացքով, արագ-արագ մի դէմքից միւսը  
անցնելով:

—Եղայրներ և բոյրեր, — զոչեց նա զոռ  
կրծային ձայնով,—ես էլ իմ տսելիքն ունեմ ձեզ:  
Քիչ առաջ քարոզ լսեցիք և այդ քարոզը խան-  
դաղատեցրեց ձեզ, բայց արդեօք երկար կը տեի  
այն սփոփանքը, որ նա պատճառեց ձեր սրտե-  
րին: Միմիայն մինչև հասնէք ձեր զօրանոցանը-  
ման տները կամ խղճուկ խրճիթները, ուր աղ-  
քատութիւնն ու կեղտը, մարդագայել պայման-  
ների բացակայութիւնը, կանանց գերմարդկային  
աշխատանքը և ճանապարհի կողքին բուսնող ե-  
ղինջի նման անխնամ թողնուած երեխաները՝  
նորից կը սկսեն ճմլել ձեր սիրտը և ճնշել ձեր  
միտքը... Քարոզ լսեցիք: Շուտով երկու հազար  
տարի կը լինի, ինչ առաջին անգամ այդ քարո-  
զը հնչեց Գալիլէայում: Այն ժամանակից ի վեր  
ամենայն օր և ամենայն եղանակով ժողովրդին  
ամեն տեսակ երջանկութիւն են խոստանում,  
եթէ նա անտրտունջ կատարի հեղութեան ու  
խոնարհութեան պատուիրանը: Այս, ամբողջ քսան  
դար խոստանում են բոլոր սղաւորներին, որ նը-  
րանք կը մխիթարուեն, և հեղերին, որ նրանք կը  
ժառանգեն երկիրը: Այդպիսի քարոզներով այս

աշխարհի հարուստներն ու հզօրները քնացնում  
էին ժողովուրդը, որին այդպիսով աւելի հաս-  
տատ կերպով էին պահում անարգութեան ու  
ստրկութեան մէջ: Ժամանակ է վերջ տալու այդ  
դարաւոր խարէութեան և սուտն ուրանալով՝ ճըշ-  
մարտութիւնն իմանալու:

Ժողովուրդն իրար անցաւ: Խառնիճաղանձ  
ձայների ժխոր բարձրացաւ:

—Քշեցէք այդ մարդուն, որ Աստուած է  
հայհոյում,—զոռում էր մի ծերուկ:

—Ոչինչ, տեսնենք՝ ինչ է ասելու, —բացա-  
կանչեղ մի ուրիշ ունկնդիր:

—Թող խօսի, թող խօսի: Թոյլ տուէք, —թըն-  
դացին բազմաթիւ ձայներ, և օտարականը, որ  
լուռ սպասում էր աղմուկի հանդարտուելուն, շա-  
րունակեց.

—Ես կը քարոզեմ ձեզ նոր աւետարան, ո-  
րին վիճակուած է փրկել վերջապէս մարդկային-  
տառապող ցեղը: Ես կուսուցանեմ ձեզ նոր ճըշ-  
մարտութիւն, որ հեզ գառնուկներին վագր կը-  
դարձնի գայլերի դիմաց, խակ ձեզ՝ ճնշողներին  
յաղթահարող հսկաներ:

Բլուրի շուրջը յանկարծ մեռելային լուռութիւն-  
տիրեց: Սկսեց լառել հեռաւոր պուրակում երգող  
սոխակի դայլայլիկը և պարզ որսշուում էր թեթե  
ճոխնչը սայլակի, որ անցնում էր շատ հեռու

փոշոտ ճանապարհով։ Եւ ահա բլուրի գագաթից հնչեց նոր խօսքը, որ չէր պատուիրում, ինչպէս հին-աւետարանը, զլուխ խոնարհեցնել ամեն մի հարուածի տակ՝ յանուն մի սիրոյ, որ բարիք չի ծնում, այլ քարոզում էր ոյժ՝ ուղղուած դէպի ներգործական բարին, կորով՝ պաշտպան մարդկային արժանապատւութեան և ատելութիւնն դէպի չարը՝ ի սէր մարդու։

Օտարականն ասում էր.

—Վայ հոգով աղքատներին, որոնք հաշտուել են իրանց աղքատութեան հետ և չեն ըմբռստացել անարդարութեան դէմ։ Նրանց չէ պատկանելու երկնքի արքայութիւնը, որովհետև չը կայ ուրիշ «երկնքի արքայութիւն», բացի արդարութեան արքայութիւնից երկրիս երեսին։ Երանի ամենքին, որոնք դժգոհ են իրանց հոգեկան ու կենսական աղքատութիւնից, այն ամենքին, որոնք ըմբռստացել են իրանց տգիտութեան ու ստորացման դէմ, որովհետև միմիայն նրանց է վիճակուած իրագործել Աստծու արքայութիւնը երկրիս երեսին։

—Վայ սգաւորներին, որովհետև արցունքը թուլութեան, կոռուից փախչելու նշան է։ Միսիթարութիւն պէտք է փնտուել ոչ արցունքի, այլ դիմադրութեան մէջ, կոռուի մէջ։ Երանի կուող-

ներին, որովհետև նրանք չեն լալիս և կարօտ չեն միմիթարութեան:

—Վայ հեզերին, որոնք բռնութիւնը հանդիպում են բութ, խոնարհ, անմռունչ հեզութեամբ: Նրանք երբէք չեն ժառանգիլ երկիրը, որովհետև երկրին վաղուց տիրացել են : զօրներն ու ագահները, որոնց սիրտը բարացել է, իսկ միտքը վարժուել կեղեքածը պաշտպանելու արուեստի մէջ: Սպասել, որ նրանք կը տան երկիրը ի ժառանգութիւն հեզերի սրանց հեզութեան համար,—միևնոյնն է, թէ սպասել, որ յոպոպը՝ ուրիշի բնում մեծանալուց յետոյ՝ դուրս չի նետիլ իսկական մօր ձագուկներին: Երանի արիներին և ըմբոստներին, որովհետև միմիայն նրանք, կամքով ու կորովով հզօրները, կը նուաճեն ու կը ժառանգեն երկիրը:

—Վայ նրանց, որոնք քաղցած ու ծարաւի են արդարութեան, եթէ ոչինչ չեն անում իրանց ծարաւը յագեցնելու համար և յոյսները ամբողջապէս դրել են Աստծու վրայ, որովհետև նրանք երբէք չեն յագենալ... Երանի այն ամենքին, որոնք ըմբոստացել են անարդարութեան դէմ, որովհետև նրանք արդէն մօտ են յագենալու:

—Վայ նրանց, որոնք ողորմած են դէպի անողորմութիւնը, որովհետև բազմացնում են չափիքը աշխարհում: Ամենայն ողորմածութիւն դէ-

պի ճնշողը՝ անողորմութիւն է դէպի ճնշուածները, ամենայն ողորմածութիւն դէպի դահիճը՝ հարուած է դառնում նրա զո՞ի համար... Երանի նրանց, որոնք չը գիտեն ողորմածութիւն դէպի դահիճները և հպատակւում են միմիայն արդարութեան ձայնին, որովհետեւ նրանք կարօտ չեն սղորմածութեան:

—Վայ խաղաղաբարներին, որոնք կարկատան են կաղնում մաշուած հագուստին, որ այլ և չի պատսպարում հագնողներին: Վայ խաղաղաբարներին, որովհետեւ այն բանը, որ նրանք Աստծու որդիք են կոչուելու, նրանց ընդունակ չի դարձնիլ արդարութիւնը պաշտպանելու: Կը-ուուին կոիւ պէտք է դէմ դնել, բոնութեանը՝ ոյժ, — այդպէս է կեանքի և գործուն սիրոյ օրէնքը: Երանի նրանց, որոնք չեն խօսում խաղաղութեան մասին այն ժամանակ, երբ անհրաժեշտ է դիմադրութիւն, և փարիսեցիական ճառեր չեն ասում գայլերի ու ոչխարների եղբայրութեան հնարաւորութեան մասին: Երանի նրանց, որոնք չարի դէմ ըմբոստացման ու մաքառման սերմեր են ցանում, որովհետեւ նրանք արդարութեան որդիք կը կոչուեն:

—Վայ ձեզ, եթէ թոյլ կը տաք, որ անպատիծ կերպով հալածեն, նախատեն և ամեն կերպ անուանարկեն ձեզ արդարութեան համար:

Վայ ձեզ, եթէ այդ հալածանքները չը ստիպեն ձեզ, հալածուածներիդ, եղբայրաբար ձեռք ձեռքի տալ ու միանալ, և արդարութեան բանակ կազմել, և սուր կապած՝ մաքուր հոգով ու արի սրտով ոտքի կանգնել ամբարիշտների դէմ:

Երկնքի արքայութիւնը երկրիս երեսին պատկանում է ոչ նրանց, որոնք համբերութեամբ տառապում են՝ թէկուզ արդարութեան համար, այլ նրանց, որոնք անընդունակ են հանդուրժել անարդարութիւնն ու ճնշումը:

Երանի նրանց, որոնք չեն ուզում համբերութեամբ կրել հալածանք նոյն խակ արդարութեան համար, որովհետեւ արդարութիւնը չը պէտք է հալածուի, այլ պէտք է արեկ պէս փայլի ամբողջ աշխարհի համար, ազատ-համարձակ լոյս ու ջերմութիւն սփռելով ամենքի վրայ:

Այդպէս էր խօսում օտարականը և նրա խօսքերը արձագանք էին գտնում շը ջապատողների սրտերում, ինչպէս զօղանջը ահակոչ զանգին նա խռովութիւն էր գցում նրանց հոգումէջ, նա կոչում էր նրանց դէպի վտանգներ, բայց և դրա հետ միասին նա յոյս էր ներշնչում լաւագոյն ապագայի—ոչ յայնկոյս գերեզմանի, ուր պիտի տանէին նրանց՝ անտանելի զրկանքները, ուժասպառող աշխատանքը և դառն անարգանքները, այլ այստեղ, երկրիս երեսին, սիրե-

ցեալների ու մտերիմների շրջանում։ Եւ նրանց  
աչքերը հուրհատում էին ու կրծքերը հեինե  
բարձրանում նրանց համակած նոր զգացմունք-  
ների թափից։

Մինչ այդ՝ գգուիչ գիշերը արդէն պատել էր  
երկիրը իր խաւար սաւանով և աստղեր ցանել  
երկնքի երեսին։

Բայց ամբոխը չէր ցըւում և ահակոչնակը  
շարունակում էր հնչել։

—Դիմադրեցէք չարին բոլոր միջոցներով, ի  
բաց չառած և բռնի ոյժը, և մի լսէք նրանց,  
որոնք ձեզ քարոզում են, որ ձախ երեսներդ գէմ  
անէք՝ ային խփելիս, որովհետեւ այդ մարդիկ, ի-  
րանց անմտութեան մէջ, միմիայն կրկնապատ-  
կում են և յաւերժացնում անարդարութիւնը։ Ոչ-  
ամեն ապտակին ապտակով պատասխանեցէք և  
դրանով դուք ճնշողների մէջ կը մեոցնէք ու-  
րիշներին ծեծելու սէրը։

—Մի լսէք նրանց, որոնք ձեզ ասում են,  
թէ չը պէտք է դիմադրել, երբ ձեզ կեղեքում  
են ու կողոպտում, և թէ շապիկներդ Խղելիս՝ կա-  
մովին պէտք է տաք նաև մնացած շորերդ։ Մի  
լսէք նրանց, որովհետեւ այդպէս խօսում են մի-  
միայն ձեր կեղեքիչներից կաշառուած ստրուկ-  
ներն ու արբանեակները կամ այնպիսի մարդիկ,  
որոնց սիրտը մեղկ է, ինչպէս փթռուկ, անհամ

ու անհոգ պտուղ, որ ոչ ոքի աշք չի դուարձացնում և ոչ ոքի քաղց չի կարող յագեցնել:

—Դուք լսել էք, որ ասուած է. «սիրեցէք ձեր թշնամիներին և օրհնեցէք ձեզ Ակողներին ու հալածողներին»... Իսկ ես ձեզ ասում եմ,— ատեցէք թշնամիներիդ ձեր հոգու ամբողջ ոյժով, եթէ այդ թշնամիները միևնոյն ժամանակ և արդարութեան ու ճշմարտութեան հալածողներ են:

Թող կորչի, ուրեմն, դարաւոր համբերութիւնը: Բարձրացրէք գլուխներդ ու բարձր պահէք ճակատներդ, որովհետեւ ձեր կողմն է արդարութիւնը, իսկ եթէ ուղէք, ձեր կողմը կը լինի նաև ոյժը:

Լսած կը լինէք նոր կոչը, —միացէք, բոլոր երկիրների աշխատաւորներ ու բեռնաւորներ: Հետեւցէք աշխատաւոր դասի այդ պատուիրանին, դուք ամենքդ, գիւղացի ու բանուոր: Միացէք, բանուորական մեծ բանակներ կազմեցէք և կոռուի ելէք հոդ ու ազատութիւն ձեռք բերելու համար:

Կուռվ միայն կը սիրանաս են իրաւունքին:





